# ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Բուխարեստ, 8 փետրվար 1950

ՊԱՏՎԱՐԺԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

*«Էջմիածին» ամսագրի յուրաքանչյուր թիւը երբ կստանամ, ո՛չ միայն հոգեկան անհուն հրճուանք մը կզգամ, այլ և կսքանչանամ անոր ամէն մէկ հոդուածին և առանձին գրութիւններուն յուրաքանչյուրին խոր արժէքին վրայ։*

*Ամսագրին այսպէս խնամեալ և բովանդակալից լոյս տեսնելը նաև անտարակոյս ազգային հպարտութիւն մըն է, նամանաւանդ սիրելի Հայրենիքէն հեռու ապրող Սփիւռքի մեր հայութեան համար։*

*Ինչ կ՚վերաբերի ազգային, կրօնական, պատմական, գրական և հայրենի ձայնը երգող նորագոյն բանաստեղծութեամբ լոյս ընծայված նյութերու մասին, բովանդակութեամբ իրենին կնմանին ոսկիի հանքի մը, որ մութին ծոցէն դուրս, լոյսի միջոցով, մեզ կըրկէ իր թանկագին արտադրութիւնը՝ մեր ազգային թէ կրօնական մասամբ պակսած սնունդը աւելի ճոխացնելու և հարստացնելու համար։ Միևնոյն ժամանակ ամսագիրը վստահաբար զօրաւոր և շարունակական կապը պիտի մնայ Մայր Հայրենիքէն հեռու ապրող հայերս Հայրենիքին և Եկեղեցիին կապող։*

*Ամսագրին «Էջմիածին» անունը արդէն իսկ մեզ, ամէն մաքուր հայու սիրտ, անկասկած առանց բացառութեան, անմիջապէս կփոխադրէ Ս. Էջմիածնայ կամարներուն ներս, խորին հաւատքով և երկյուղածութեամբ։ Ս. Էջմիածի՜ն, անսասան և մայրական բոյնը մեր քրիստոնէական հաւատքին և ազգային կենդանութեան։*

*Դժբախտաբար, ազգային անարատ զգացումով կուռ հայութեան մեծ զանգված մը դեռ կապրի երկրագունդին գրեթէ ամէն մասին մէջ, հեռու հիմնավորից Մայր Աթոռին հոգեպարար մթնոլորտէն։ Նույնիսկ կխորհիմ թէ անցյալ սերունդէն հասունցած անհատներու մեծագոյն թիվ մը և նամանավանդ նոր սերունդէն մեծ թիվ մը կազմող նորահասներ, Ս. Էջմիածնա Մայր Աթոռին անցյալ պատմութեան, կրոնական թէ ազգային տեսակետէն, անոր կատարած դերին և արժեքին նկատմամբ անտեղյակ կմնան։ Ես եթե չեմ սխալիր, այս ուղղութեամբ լոյս ընծայված ուսումնասիրութիւն մը չունինք։ Հետևաբար թող ներվի ինձ Ձեր պատվարժան խմբագրութենէն խնդրել, եթե կարելիութիւն և հարմարութիւն կնկատվի, Մայր Աթոռին հաստատութեան սկզբէն սկսյալ մինչև մեր օրերը, Հայրապետական Աթոռին հաստատման շարժառիթներուն, Ամենայն Հայոց Սրբազան կաթողիկոսներուն հաջորդաբար կենսագրութեան և գործունէութեան գիծերը, և, վերջապես, Մայր Աթոռին կրոնական թէ ազգային օգտաշատ գործունէութեան բազմակողմանի մանրամասնորեն պատմական ուսումնասիրութեան ձեռնարկել և ամսագրին էջերուն մէջ հաջորդաբար լոյս ընծայել։*

*Այսպիսով, եթե կրկին անգամ թոյլ կտրվի ինձ՝ կխորհիմ թէ ամսագիրը արդէն իրենին մեծագոյն արժէքը տված պիտի ըլլա իր անունին ու հեռավոր և մութին մէջ խարխափող զավակները տեականորեն կապէ և գիտակից պահէ Մայր Աթոռին անցյալին ալ նկատմամբ։*

Խորին հարգանոք,

բերող՝ ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԱՆ

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը այս նամակի կապակցությամբ պարտք է համարում հայտնել, որ առաջիկա համարներում նախատեսվում է զետեղել Մայր Աթոռի և Հայ Եկեղեցու ականավոր գործիչների մասին նման ուսումնասիրություններ: Վեհափառ Հայրապետը, որը մեծ հոգածություն է ցուցաբերում ամսագրի խմբագրության նկատմամբ, ցանկություն ունի, որ ամսագիրն ավելի ճոխ և բովանդակալից լինի: Սակայն, այդ ցանկությունը, որոշ չափով, կախված է մեր հավատացյալ ազգայիններից: Ցանկալի է, որ ամսագրին իրենց աշխատակցությունը բերեին Հայրենիքի և Սփյուռքի մեր բոլոր պատրաստված մտավորականները՝ աշխարհական թե հոգևորական, և, մյուս կողմից, բոլորը աշխատանք տանեին ամսագրի նյութական կողմը ապահովելու ուղղությամբ, որպեսզի հնարավոր լիներ «Էջմիածին»-ը հրատարակել պարբերաբար յուրաքանչյուր ամիս;—ԽՄԲ.